

---

## **ՈՉ ԶԵՎԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԵՏԽՈՐՃՐԱՅԻՆ ՂԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

### **ԱՐՄԱՆ ՂԱՐԱԳՈՒՅՑԱՆ**

Հետխորհրդային բարեփոխումներն առաջ բերեցին իրողություններ՝ խնդիրներ աշխատաշուկայում, ազատ գներ, արժեգրկում, որոնց հասարակությունը ամենակին պատրաստ չէր: Պլանային տնտեսության ապակենտրոնացումը և պետական ունեցվածքի սեփականաշնորհումը հանգեցրին էլ ավելի դրամատիկ երևույթների: Նոր իրավիճակի ամենաարմատական փոփոխությունը հասարակական միջավայրի անկայունության և անկանխագուշակելիության զգացումն էր: Սովորույթի համաձայն՝ երաշխավորված համարվող շատ երևույթներ դադարեցին այդպիսին լինելուց, օհսկային իրավիճակները դարձան առօրյա կյանքի անբաժանելի մասը: Ռեսուրսների սահմանափակությունը մարդկանց ստիպեց իրենց նյութական և սոցիալական վիճակը բարելավելու համար օգտագործել ցանկացած հնարավորություն՝ աշխատանք, ընկերներ, բարեկամներ և այլն: Տնտեսական և սոցիալական քաղաքականության, համրային կառավարման սկզբունքների անկատարությունը հանգեցրեց հասարակության տարբեր ինստիտուտներում ոչ ձևական հարաբերությունների չափաբաժնի կտրուկ մեծացմանը, հասարակական վերահսկողության այլնութանքային համակարգերի գործառնության ակտիվացմանը:

Տվյալ դեպքում «ոչ ձևական հարաբերություններ» ասելով հասկանում ենք այնպիսի գործողությունների ամբողջություն, որոնք, ձևավորվելով անձնային կապվածության հենքի վրա, գործում են վարքի՝ հասարակայնորեն ընդունված կանոններից դրւս կամ դրանց գուգահեր և ուղղված են տարբեր տեսակի ինստիտուտացված ռեսուրսների հասանելիության ապահովմանը:

Հոդվածում քննվող հիմնախնդրի համատեքստում կարևոր է այն հանգամանքը, որ թեև խորհրդային Միության հասարակական կառույցները, ինչպիսիք էին ապրանքների բաշխման և վերահսկողության, համընդհանուր գրաղվածության, կայուն դրամաֆինանսային պետական համակարգերը և այլն, բնակչության ապահովում էին պետականորեն երաշխավորված ծառայություններով և սպառնան ապրանքներով, այդուհանդերձ հատկապես ուշ խորհրդային տարիներին ապրանքների համընդհանուր պակասուրդի պայմաններում թե՛ միջանձնային և թե՛ սոցիալական կառույցների մակարդակում արդեն իսկ ձևավորվել էր ոչ ձևական ցանցերի՝ որպես սոցիալական հարմարվողականության յուրահատուկ մեխանիզմների որոշակի ամբողջություն: Նման ոչ ձևական ցանցերը անհատների միջև անձնավորված հարաբերությունների այնպիսի համակարգեր են, որոնք չունեն ներքին աստիճանակարգում, հստակորեն սահմա-

նագծված չեն, ուստի բաց են նաև սոցիալական այլ միջավայրերի պատկանող և այլ գործունեություն իրականացնող անձանց համար<sup>1</sup>: Այսպիսի ցանցերը տարբերվում են ծևական ինստիտուտներից նրանով, որ ի սկզբանե կողմնորոշված են առավելապես դեպի «ներս», դեպի այդ հարաբերությունների պահպանումը և ոչ դեպի «դուրս»: Այսինքն՝ դրանք չունեն կոնկրետ նպատակային կամ գործառնական բնույթ, թեև կարող են օգտագործել որևէ որոշակի նպատակի հասնելու համար:

Խորհրդային համակարգում ոչ ծևական ցանցերը, ուժեղացնելով ամձնական շփումները, նվազեցնում էին պլանային տնտեսության և քաղաքական համակարգի կոչտ սահմանափակումները: Քանի որ պլանային տնտեսության մեջ տնտեսական փոխազդեցության գլխավոր միջոցը ամենին էլ փողը չէր, ուստի՝ առաջացած հիմնախնդիրները լուծվում էին ապրանքափոխանակության կամ էլ «ծանոթությունների» միջոցով: Այստեղ, որտեղ ապրանքների մշտական պակասուրդը համակցվում էր հասարակության լայն շերտերի սպառողական դիրքորոշման, իսկ հավասարության գաղափարախոսությունը՝ տարբեր արտոնությունների և փակ բաշխման համակարգերի հետ, անձնական կապերը միակ միջոցն էին, որոնք կարող էին թույլ տալ պաշտոնապես հաստատված արտոնյալ խնդերի մեջ չնմոնող անձանց քիչ թե շատ օգտվել «հազվագյուտ» սպառման ապրանքներից<sup>2</sup>: Այսպիսով, ոչ ծևական ցանցերը պաշտպանում էին նաև նավոր շահերը պետական բաշխման համակարգի սահմանափակումներից՝ թույլ տալով օգտվել հարաբերական բարեկեցությունից և հօգուտ ավելի քիչ արտոնություններ ունեցող շերտերի վերաբաշխել այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնցից կարող էին օգտվել միայն կուսակցական և կառավարական վերնախավերը:

Համառորեն մերժվելով «պաշտոնական» բարոյականության կողմից՝ այդ հարաբերությունները, սակայն, կազմում էին հասարակական կյանքի անքաժանելի մասը: Ուստի, չնայած նրան, որ հետխորհրդային փոխակերպումներն առաջ բերեցին արմատական փոփոխություններ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդուհանդերձ վարքի այն օրինակները, որոնք օրգանապես կապված էին խորհրդային քաղաքական և տնտեսական համակարգերի հետ, տեղափոխվեցին սոցիալ-տնտեսական նոր կենսածով պայմանավորված փոխանակման այլ համակարգեր: Վերոնշյալին գումարվեց նաև այն հանգամանքը, որ պետական համակարգի քայլայումը, բնակչության լայն շերտերի՝ դրանից բխող ցածր վճարումնակությունը և կենսամակարդակի անկումը հետխորհրդային հասարակություններում լուրջ հիմք հանդիսացան ոչ ծևական ցանցերի նորովի աշխուժացման համար:

Հարկ է նշել, որ սա ամենին էլ չի նշանակում, թե նման ցանցերի ակտիվ գործառնությունը կապված էր միայն հետխորհրդային փոխակերպական գործընթացների անորոշության հետ, և հանձինս վերջինների՝ մենք

<sup>1</sup> Стёу Гудков Л., Дубин Б. Институциональные дефициты как проблема постсоветского общества // "Мониторинг общественного мнения: экономические и социальные перемены", 2003, № 3, էջ 33:

<sup>2</sup> Стёу Ledeneva, A. Blat Lessons: Networks, Institutions, unwritten rules // The Legacy of the Soviet Union, Palgrave Macmillan, 2004, էջ 124:

պարզապես գործ ունենք անցյալի հերթական մնացուկի հետ: Իհարկե, կարելի է ենթադրել՝ քանի որ արդիականացման գործընթացներն ի վերջ հանգեցնելու են ժողովրդավարության և շուկայական հարաբերությունների կայացման, իսկ վերջիններիս զարգացումը անխուսափելիորեն բերելու է հասարակական հնստիտուտների նկատմամբ Վստահության աճի, ապա ոչ ծևական, անձնավորված հարաբերությունները հրատապ են լինելու միայն մի փոքր ժամանակահատվածում՝ որպես անցունային ժամանակաշրջանի դժվարությունների հաղթահարման միջոց: Նման պարագայում եթե ընդունենք, որ խորհրդային հասարակությունում գոյացած ոչ ծևական հարաբերությունների համակարգը նախ և առաջ հասարակության շարքային անդամի առօրյա կենսունակության ռազմավարության արտահայտությունն էր, ապա ակնհայտ է, որ վերջիններիս նման դրսևորումը հետխորհրդային հասարակություններում գնալով պետք է նվազի<sup>3</sup>:

Նման մոտեցումը, անշուշտ, ունի որոշակի հիմքեր. այդուհանդերձ, ոչ ծևական հարաբերությունների գործառությունները չի կարելի հանգեցնել միայն, ասենք, դրամական հարաբերությունների փոխատեղման և կամ էլ անցունային իրողությունների բացասական հետևանքների մեղմացման: Մասնավորապես, կասկածից դուրս է այն հանգամանքը, որ ներկայումս հետխորհրդային շատ երկրներում (այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում) ոչ ծևական ցանցերը հասարակական հարաբերությունների համակարգում անհամեմատ մեծ չափաբաժին են կազմում: Չնայած հետխորհրդային հասարակություններում ոչ ծևական հարաբերությունները դադարել են առօրյա կյանքում առաջնային անհրաժեշտություն լինելուց (այլևս կարիք չկա սննդամբերը կամ լայն սպառման ապրանքներ ծեռք բերելու այլնտրանքային ուղղիներ փնտրելու), այդուհանդերձ դրանց կարիքը դեռևս զգացվում է ավելի լավ ապրելու, հարմարավետության ավելի բարձր մակարդակ ապահովելու համար:

Առհասարակ ընդունված կարծիք է, որ ոչ ծևական ցանցերը նպատակ են հետապնդում ապահովելու հետևյալ ռեսուրսների հասանելիությունը՝ ապրանքներ, ծառայություններ, եկամտի աղբյուրներ (կրթություն, աշխատատեղ, արտոնություններ)<sup>4</sup>: Ըստ այդմ, եթե խորհրդային հասարակությունում ոչ ծևական հարաբերությունների համակարգերը նախ և առաջ գործում էին տարբեր նյութական բարիքների և ծառայությունների վերաբաշխման ուղղությամբ, ապա հետխորհրդային հասարակություններում դրանք միտված են հիմնականում դեպի եկամտի աղբյուրները, մասսամբ էլ դեպի ծառայությունները (խոսքն այս դեպքում բարձրակարգ ծառայությունների մասին է):

Ոչ ծևական ցանցերի գործառնությունը անխուսափելի է սահմանափակ ռեսուրսների՝ բյուջեների, հավելավճարների, նպաստների բաշխման գործընթացներում, պետական վերահսկողության մարմինների գործառնության, օրինակ՝ մաքսային կամ հարկային պարտավորությունների վե-

<sup>3</sup> Տե՛ս Դեզեր Մ. "Неформальные отношения": как с ними быть? // "Вестник общественного мнения: Данные. Анализ. Дискуссии", 2003, № 1 (67), էջ 45:

<sup>4</sup> Տե՛ս Լеденева А. В. Личные связи и неформальные сообщества: трансформация блата в постсоветском обществе // "Мир России", 1997, № 2, էջ 102:

րահսկմանն առնչվող խնդիրներ լուծելիս: Անձնական ծանոթությունները մնում են առաջնային այնպիսի իրավիճակներում, երբ փողը չի ընդունվում որպես փոխանակման միջոց (օրինակ՝ տարրեր կառույցների կառավարման բարձր մակարդակներում): Զարմանալի չէ, որ մարդիկ աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու և կամ էլ սեփական բիզնեսը զարգացնելու համար բնազրաբար սկսում են դիմել իրենց ծանոթություններին այնպես, ինչպես սովոր էին դրանք օգտագործել անձնական սպառնան ապրանքներ հայթայթելիս: Կրոյունքում ստացվում է, որ, օրինակ, հաջողակ բիզնեսմեն լինելու համար պետք է «յուրային» լինել որոշակի շրջանակներում: Իրոք, այսօր ոչ ծևական ցանցերում ներգրավված լինելը բիզնեսի կառավարման համար դառնում է որոշիչ, իսկ հարկերի, մաքսային օրենքների, կառավարական տարրեր վարչությունների որոշումների, բանկերի քաղաքականության մասին տեղեկատվություն ստանալու հարցում՝ նույնիսկ անհրաժեշտ: Ընդ որում՝ շատ դեպքերում ոչ ծևական կապերի նման համակարգերի ակունքները գալիս են դեռևս խորհրդային ժամանակներից<sup>5</sup>:

Այսպիսով, հանձինս հետխորհրդային հասարակություններում ոչ ծևական ցանցերի՝ մենք գործ ունենք ոչ այնքան գոյամիջոցների խնդիր, որքան սոցիալական առաջխաղացման յուրահատուկ ռազմավարության հետ: Այս իրողությունը փաստարկ է հօգուտ այն տեսակետի, որ չի կարելի ոչ ծևական հարաբերությունները հանգեցնել պասիվ հարմարվողական ռազմավարության, որից իր պետք է կառչի վերջնականորեն շփոթված homo sovieticus-ը: Այսինքն՝ ոչ ծևական հարաբերությունների արխահիկությունը խիստ չափազանցված է. վերջիններս խորհրդային հաբիտուսի (վարքի նախատրամադրվածության) պարզ վերարտադրություն չեն: Ըստ այդմ՝ փոխանակ դրանք սոցիալական ցանկալի առաջխաղացման արգելակ դիտարկելը, տեսական առումով շատ ավելի նպատակահարմար և արդյունավետ է նախկինում գոյություն ունեցող սոցիալական վարքի այդ ծերը քննարկել որպես այլ պայմաններում և այլ նպատակներով նորովի կիրառության դրսերումներ:

Այսպես, խորհրդային հասարակության արժեհամակարգը ուղղորդող անդեմ հասարակականը և գաղափարայնացված հոգևորը մերժում էին անհատի և անհատականության ցանկացած դրսերում<sup>6</sup>: Ի հակադրություն խորհրդային գաղափարախոսության, որը հրչակում էր վերացական համահավասարեցված համերաշխություն (ըստ այդմ՝ պահանջվում էր համերաշխություն որոշակի դասակարգերի, այլ ոչ թե անհատների միջև), հետխորհրդային հասարակություններում մենք տեսնում ենք այնպիսի գործունեություն, որի նպատակն է որոշակի անհատի հանդեպ խթանել արտոնյալ հարաբերությունների ոլորտում գտնվող այլ անհատների շա-

<sup>5</sup>Տե՛ս Հոկուլեր Յ. Ա., Լեծենևա Ա. Վ. Российская экономика блата: благ, сети отношений и неформальный обмен // "Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература". Серия 11, Социология. Реферативный журнал, 2001, № 3, էջ 66-67:

<sup>6</sup>Տե՛ս Ե. Յարությունյան, «Եթոնշակութային ապաստարանը» որպես գոյատևման գեղագիտական նախագիծ // Բանբեր Երևանի համալսարանի, Փիլիսոփայություն, Յոգեբանություն, 2010, 132.4, էջ 6:

հագրգիռ վերաբերմունքը<sup>7</sup>: Այս մեխանիզմն արդեն իսկ արմատավորված էր խորհրդահայ իրականության մեջ (հիշենք, այսպես կոչված, «խճ»-ի՝ «խնամի-ծանոթ-բարեկամ»-ի պրակտիկան), սակայն սոցիալական կողմնորոշիչների կորստի պատճառով հետխորհրդային հասարակություն մուտք գործած նարդկանց ինքնահաստատման գործընթացը և վերահաս «նույնականության պակասուրդը» էլ ավելի մեծացրեցին դրա պահանջարկը: Այս համատեքստում ոչ ձևական ցանցերը ստացան նաև «անանունության» հաղթահարման որոշակի գործառույթներ, ինչպես առանձին անհատի դեպքում (թժիշկը, անշուշտ, ավելի ուշադիր է այն հիվանդի նկատմամբ, որն իր մոտ է եկել ինչ-որ մեկի «հանձնարարականով»), այնպես էլ գումարային «անդեմ» հարաբերությունների կարգավորման հարցում (վճարված այս կամ այն գումարի «օգտակար գործողության գործակիցը» կարող է մեծանալ՝ կախված նրանից, թե վճարողը ինչքանով է «ծանոթ» գումարը ստացողին):

Նման համատեքստում ոչ ձևական հարաբերությունները նպաստում են փոխանակման գործընթացի անձնականացմանը, որի շնորհիվ ավելի հեշտ է առաջանում «վստահությունը», որը միշտ չէ, որ ձեռք է բերվում միմիայն փողով, մանավանդ որ հետխորհրդային հասարակություններում փողը դեռևս չի հասել լեգիտիմության և հուսալիության այն նակարդակին, որ դառնա բարի բուն իմաստով համապիտանի արժեք: Այդ հիմնարար հատկանիշն իր հերթին հիմնված է իր գործառույթներն արդյունավետորեն իրականացնող կենտրոնական իշխանության հանդեպ վստահության, նաև փողի և աշխատանքի միջև արդարացի հարաբերությունների առկայության համոզվածության վրա:

Փոխանակման գործընթացի անձնականացումը նպատակ է հետապնդում ոչ այնքան ավելացնելու փողն իրեն այդպիսին, որքան փոխառուցելու նրա «անլիարժեքությունը»: Ոչ ձևական հարաբերությունները չեն սահմանափակվում միայն նրանով, որ այս կամ այն հնարավորությունը միանվագ կամ պատահականորեն դարձնում են մատչելի՝ իրեն փոխառուցում ինստիտուցիոնալ պակասուրդի: Եթե անհատը կաշկանդված չէ հանապազօրյա հացի համար պայքարի տրամաբանությամբ, նա ձգուում է առավելագույնս երկարաձգել ի սկզբանե հպանցիկ ոչ պաշտոնական հարաբերությունները, դրանք նյութականացնել այն նկատառումով, որ հետագայում կարողանա օգտագործել իր կամ իր մերձավորների օգտին: Դա դառնում է որոշակի ապրելակերայ: Ի վերջո անհատը սոցիալական տարածության մեջ դիրքավորվում է որպես հանրային հարստությունների տիրապետող, հարստություններ, որոնք շրջանառվում կամ փոխանակվում են պաշտոնական անանուն խողովակներին գուգահեռ: Այս համատեքստում խնդիրները ոչ միայն փողով, այլև «ծանոթներով» լուծելը ենթադրում է նոր հարաբերությունների և ցանցերի հաստատման հնարավորություն, ինչին կարող են դիմել նաև միանգանայն ապահովված, փողի պակաս չզգացող մարդիկ:

Ժ. Գորբուն հետևյալ կերպ է մեկնաբանում այն պատճառները, որոնցով ոչ ձևական ցանցերը այդքան մեծ նշանակություն են ստացել հետ-

<sup>7</sup> Տե՛ս Ջեզեր Մ., նշվ. աշխ., էջ 47:

խորհրդային փուլում. «Ընծան միակ բանն է, որ մնում է նրան, ով ամեն ինչ մոռացել է, և ով դեռ պետք է ամեն ինչ սովորի»<sup>8</sup>: Ժ. Գոդբուն ընծա ասելով հասկանում է մարդկանց միջև սոցիալական նոր կապերի ստեղծման կամ արդեն եղածների ամրապնդման կամ վերականգնման նպատակով բարիքների կամ ծառայությունների տրամադրում՝ առանց դրանց վերադարձի որևէ երաշխիքի<sup>9</sup>:

Դա պետք է հասկանալ այս կերպ. արդեն անցյալ դարձած պլանային տնտեսության և դեռևս վերջնականորեն չհաղթանակած շուկայի դարաշրջանների միջև գոյացած ժամանակային տիրույթում գոյացել և հաստատվել է փոխանակման մի յուրահատուկ եղանակ, որը կարելի է անվանել «կազմակերպված փոխադարձություն»: Այս արտահայտությունն ամենին էլ չի չափազանցում տվյալ գործունեության մեջ առկա այլասիրության (ալտրուիզմի) բաժինը, ընդհակառակը՝ հենց դրանով է տեղի ունենում գործընկերոց հետ հարաբերությունների «առարկայացումը»: Օրինակ՝ այս կամ այն պաշտոնյային ընդգրկել «շրջապատի» մեջ նշանակում է ոչ միայն նրան ընձեռել սեփական օգուտն ունենալու հնարավորություն, այլև ինտեգրել որոշակի «սոցիալական կապիտալ», որն առաջիկայում կարող է օգտակար լինել ընդգրկողին կամ նրա մերձավոր շրջապատին՝ անհրաժեշտ տեղեկություններ կամ բարիքներ ծեռք բերելու առումով: Քանի որ նմանատիպ գործողություններից կողմերը շահում են երկուստեք, տրամաբանական է, որ նրանք այդ գործելանքը դարձնում են իրենց ապրելակերպի մի մասը և դիտարկում որպես արժեք:

Այդպիսով, հանրային կապիտալի շրջանառությունը տեղի է ունենում ոչ թե համապատասխան ինստիտուտների, այլ անհատների միջոցով. առաջանում են փոխադարձության փակ շրջաններ: Ոչ պաշտոնական գործելակերպը կարծես թե օրինական հենքի վրա տեղափոխվում է հանրային ոլորտ:

Նշենք, որ նման ոչ ծևական ցանցեր գոյություն ունեն ցանկացած, նույնիսկ զարգացած երկրներում: Դրանց կարևորությունը և նշանակությունը, սակայն, շատ ավելի բարձր են թույլ և դեռևս վերջնականորեն չկայացած ինստիտուտային համակարգ ունեցող հասարակություններում: Այնպիսի իրավիճակում, երբ օրենքի պարտադիր կիրարկումը, վարքի ծևական և ոչ ծևական սկզբունքները ներդաշնակության մեջ չեն, ոչ ծևական ցանցերը, որոնց առաջացման և գոյության համար իրավական նորմերի և երաշխիքների կարիք ամենին չկա, բնականաբար դաշնում են համեմատաբար ավելի գործուն<sup>10</sup>.

Իրենց հիմքում ունենալով արյունակցական, հայրենակցական, ընկերային կապերի վրա հիմնված հարաբերություններ՝ ոչ ծևական կառույցներն առհասարակ շատ դանդաղ են զարգանում և ակնհայտորեն դիմադրում են հատկապես այլ հասարակություններում և մշակութմներում ծևակորված ինստիտուտների ներմուծմանը<sup>11</sup>: Ինչպես նշում է Ե. Յարությունյա-

<sup>8</sup> Godbout, J. The World of the Gift. 1998. Montréal : McGill-Queen's University Press, p. 27.

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղոր, էջ 30:

<sup>10</sup> Տե՛ս Ledeneva, A., նշվ. աշխ., էջ 136:

<sup>11</sup> Տե՛ս Բոնдар Ի. Ա. Взаимодействие формальных и неформальных институтов в процессе трансформации экономических отношений // "Вестник Саратовского государственного социально-экономического университета", 2010, № 5, էջ 15:

նը, «Ազգակցականությունը ինքնին «մարդամերժ» է, նրա խօսքանքի ու աշակցանքի ենթական «անձն» է, այն դիմավոր մեկը, որին տրված է «բարեկամ» լինելու Արտօնագիր»<sup>12</sup>: Զարմանալի չէ, որ նույնիսկ քայլայման գործնթացում գտնվող խորհրդային հարաբերությունների համակարգը դեռ շարունակում է պահպանվել՝ շնորհիվ մարդկային որոշակի տիպի, ով վաղուց «Ընդունել է խաղի կանոնները» և փնտրում ու գտնում է նորանոր հնարավորություններ՝ առկա պայմաններում դրանք կիրարելու համար: Ոչ ձևական ցանցերին հատուկ է «արտաքին տեսքի» փոփոխականությունը. դրանք միշտ գտնում են հանրային ոլորտի համակցման զանազան տարբերակներ՝ ներկայանալով ժողովրդավարության կամ շուկայական տնտեսության քողի տակ: Ընդ որում՝ դրանց որոշակի գծեր մշտապես մնում են անփոփոխ, ինչը թույլ է տալիս ենթադրել սոցիոնշակութային կոնկրետ որակների և նտակերտվածքի հետ դրանց երկարաժամկետ կապի մասին:

Լինելով խորհրդային համակարգի անբաժանելի տարրը և ստեղծելով փոխօգնության որոշակի մրնոլորտ՝ ոչ ձևական ցանցերը մեղմում էին խորհրդային տնտեսության և քաղաքականության սուր կողմերը: Ըստ որոշ տեսակետների՝ խորհրդային համակարգը այդքան երկար գոյատևեց նաև շնորհիվ այն բանի, որ նրանում գործող ոչ ձևական ցանցերը աստիճանական քայլայման էին ենթադրկում համակարգի գործառության ներքին սկզբունքները (մինչդեռ առողջ դատողականության տեսանկյունից պետք է լիներ լրիվ հակառակը):

Դետխորհրդային հասարակություններում ևս ոչ ձևական հարաբերությունները նախկինի ննան թույլ են տալիս մեղմել գործող օրենքները, բայց այս անգամ ոչ «հօգուտ» համակարգի գործառության: Խորհրդային ոչ ձևական ցանցերի գործառության շնորհիվ ձևավորված հմտությունները և պահպանողական նտածելակերպ ապակառուցողական նշանակություն ունեն ժամանակակից հասարակության համար: Նման ցանցերը, դուրս գալով խորհրդային համակարգի սահմանափակումներից, թափանցում են հասարակական կառավարման համակարգի մինչ այդ անհասանելի ոլորտներ՝ հանգեցնելով ընդհուպ մինչև պետության «սեփականաշնորհման»: Արդյունքում այն, ինչը ներհատուկ էր խորհրդային համակարգին՝ որպես հասարակական կայունության բաղադրատար, մեր օրերում միայն սրում է հետխորհրդային հասարակության հիմնախնդիրները:

**АРМАН КАРАГУЛЯН – Проблема трансформации неформальных сетей в постсоветских обществах.** – В статье, в частности, поддерживается точка зрения, согласно которой особенности советской системы (плановая экономика и идеологизированная политика) способствовали формированию негласных неформальных сетей. Неформальные сети несколько смягчили очевидные изъяны государственного распределения общественных благ. Ождалось, что после распада Советского Союза, в условиях рыночной экономики и демократии, они потеряют свою актуальность. Этого, однако, не случилось. Успешно адаптировавшись в постсоветских обществах, неформальные сети приобрели новое содержание и возможности. В итоге то, что при прежней системе выступало стабилизирующим фактором, на современном этапе лишь обостряет общественные противоречия.

<sup>12</sup> Ե. Քարությունյան, նշվ. աշխ., էջ 8:

**ARMAN GHARAGULYAN – *The Issue of Transformation of Functions of Informal Networks in Post Soviet Societies.*** – The article discusses functions of informal networks in contemporary Post Soviet societies. This paper supports the view that peculiarities of the Soviet system (planned economics and ideologized politics) have enabled the formation of concealed informal networks which have somewhat softened blatant insufficiency of social goods distributed by the state. After the fall of the Soviet Union, the informal networks that smoothly moved into Post Soviet society successfully adapted to new conditions, attained new content and opportunities for dispersion contrary to expectations that their actuality would fade away in the context of emergence of market economy and democracy. As a result, the structures that served as elements for stabilization in the former system, only hone social issues in the contemporary stage of development.